Հավելված
ՀՀ փոխվարչապետի
N 462 - Ա որոշման

«Ներառական խաղահրապարակի և մարզահրապարակի ստեղծում»
ԾՐԱԳԻՐ

1.	Ծրագրի նպատակը	Ֆիզկուլտուրայի դասաժամերին կրթության որակի, ֆիզիկական պատրաստվածության մակարդակը բարձրացնելու, բացօթյա դասեր անցկացնելու, առողջ ապրելակերպի խրախուսման համար Մարգահովիտի դպրոցի հարակից տարածքում խաղահրապարակի և մարզահրապարակի կառուցում: Այն ծառայելու է նաև հարակից համայնքերի ներկայացուցիչների համար՝ ակտիվացնելու միջհամայնքային կապերը և շփումները տարբեր համայնքերի միջև, այդ թվում մոլոկանաբնակ: Խաղահրապարակը լինելու է ներառական, հնարավորություն է տալու խաղալ և վայելել մանկությունը նաև հաշմանդամություն ունեցող երեխաներին, սրանով ստեղծելով հնարավորություն նրանց և հաշմանդամություն չունեցող երեխաների համար ինտեգրվելու և ապագայում ավելի ներառական հասարակություն ունենալու:
2.	Ծրագրի բարեգործական որակման նպատակը	ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով օգտվել հարկերի, տուրքեր և այլ պարտադիր վճարների արտոնություններից
3.	Բարեգործը	ՀՀ-ում Ճապոնիայի դեսպանատուն
4.	Ծրագիրը կատարողը	«Մարգահովիտի երիտասարդական կենտրոն» ՀԿ, ՀՎՀՀ 06951543, հասցե՝ Լոռու մարզ, Մարգահովիտ համայնք, առաջին փողոց, 96 շենք
5.	Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	Լոռու մարզ, Մարգահովիտ համայնք, կրթական
6.	Ծրագրի բյուջեն	10.220.000 դրամ
7.	Բարեգործություն ստացողը	Մարգահովիտի Հովհ. Թումանյանի անվան միջնակարգ դպրոց ՊՈԱԿ, 3-րդ փողոց, 20 շենք, ՀՎՀՀ՝ 06910883
8.	Ծրագրի իրականացման տևողությունը	Նախատեսվում է իրականացնել 2021 թվականի հունիսի 16-ց 2021 թվականի սեպտեմբերի 30-ը

9.	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	1. Դպրոցի հարակից տարածքում բացօթյա մարզվելու և խաղալու համար անհրաժեշտ պայմանների ապահովման նպատակով խաղասարքերի, մարզասարքերի /թվով 15 հատ/ և նստարանների /մետաղյա նստարան՝ 2 հատ, ծածկով նստարան՝ 2 հատ/ ձեռքբերման և տեղադրման աշխատանքների իրականացում՝ 9.840.000 դրամ արժողությամբ, նախատեսվում է իրականացնել 2021 թվականի հունիսի 20-ից մինչև 2021 թվականի սեպտեմբերի 30-ը: 2. Ծրագրի աուդիտ՝ 380.000 դրամ արժողությամբ, նախատեսվում է իրականացնել 2021 թվականի հուլիսի 1-ից մինչև 2021 թվականի սեպտեմբերի 30-ը:
10.	Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը	1. Նստարանների, խաղասարքերի և մարզասարքերի պատվիրման, տեղափոխման, տեղադրման աշխատանքների իրականացում՝ 9.840.000 դրամ 2. Ծրագրի աուդիտ՝ 380.000 դրամ արժողությամբ:
11.	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը	Ծրագրի աուդիտի իրականացում՝ 380.000 դրամ արժեքով
12.	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ	Մարգահովիտի տեղական ինքնակառավարման մարմինների՝ ավագանու և համայնքի ղեկավարի հետ, Մարգահովիտի միջնակարգ դպրոց ՊՈԱԿ-ի հետ
13.	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	ՀՀ կառավարության 2003 թ. հունվարի 16-ի N 66-ն որոշմամբ հաստատված՝ բարեգործական ծրագրերը բարեգործական որակելու և գրանցելու կարգի 25-րդ կետով սահմանված կարգով հաշվետվությունների ներկայացում լիազորված մարմնին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Տ. ԱՎԻՆՅԱՆ

11.06.2021
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ